74. ԼԱՎ ՏԸՆԴԵԳՅՈՒՆԸ

Ինըմ ա, չինըմ մին շենըմ մին քյաֆիր մին էլ մին հարուստ տոն ա ինըմ։ Ըտրանց ինըմ ա ուրուր յաշի էրկու տըղա։

Ըտրանց փըսըկվելի վախտը վեր կյամ ա, էրկուսըն էլ նշանվըմ ըն։

Հըրսանիքյին օրը հարուստին տըղան վեր տեսնըմ ա քյաֆիրին տըղին նշանածին, հորըն ասըմ ա. — Ա՛ հաբ, խե չը՞ս էն ախճիգը ինձ հետի օզալ։

Հաբըն ասըմ ա.— Տա անկըտրելի ծըմերուկ ա, գյիդվալ չի, վըերըն ա լավը, վըերը՝ փիս։ Տըրկյունսիլ մի, հալա վախտ կա՞։

Հըրսանիքյին պըրծընըմ ա, ամմեն մարթ քյինըմ ա ուրանց տոն։ Քյաֆիրին հարսը տեսնըմ ա, վեր էտ տանը մին կարք չիկա, լոխ շաղված, եր տրեռած, տոնը եխտոտ, տըկըկլոխ իլած, մինը տանըմ ա, մինը պերըմ, էլ գյուդվըմ չի, թա հո՞ւ վա մեծը, հո՞ւ վա պուճուրը, լոխ եր ածած, եր փըռած, աչ ըն թըխըմ, ծախ շըպրռտըմ, ծախ ըն թըխըմ, աչ շըպրռտըմ։

Էտ հարսըն ասըմ ա.— Էս տանը մին մեծ պիտի, իստի ամալ չի կյալ, իստի հիշքան էլ աշխադիք, պեն չի ըրվալ, օշաղըն էլ կըքանդվի...

Սկեսուրըն ասըմ ա.— Տու մեծը իլ, կառավարե, լավ տոն տրեռիքյ։

Հարսը ռազի չի կրենըմ, ասըմ ա.— Քանի վեր ինձանա մեծը կա, խե՞ բեդմա յրես կառավարիմ։

Էրդյան խոսելանը ետը, հարսը ռազի յա կրենըմ, ասըմ.— Դե

վեր իտի յա, էն վախտը բեդմա ինձ անգուշ օնիքյ, վեչ մինը ծրեռքը տերտակ էս մրղակավրս բեդմա նի չի մրննի, լհա վեր մին լավ պեն էլ պերի վեչ, մին չուփ ա, մին քար ա, մին տերտակ պեն ա, յոր օնի կյա տոն։

Էտ հարսին ասածնին անրմ ըն։

Մին դոնրմ պատրունը ծրմակ ա քյինրմ, ամմա կացինը տանն ա թոդրմ, մրտան քրցրմ ա յոր օնի։

Ասրմ ա. — Ա՛յ հա՜յ, պրռավալ ըմ, մրտաս պեն ա ընդնրմ, աշխարքիս մրթկերին դոնրն ըմ ընդնրմ, շաղվրմ։

Տա ետ ա տրեռնրմ, թա կյա տոն, կացինը յոր օնի, մրետրն ա քրցրմ հարսին ասածը, վեր տերտակ ծրեռքավ տոն չի կյան։ Տա տես ա եշրմ, տեն ա եշրմ, տրեսնրմ ա մին սպանված օց։

Էտ օցը յոր-օնրմ, քրցրմ էշին յրա, կյամ տոն։ Վեր տանան մուանրմ ա, մրթկրմը ասրմ ա. «Հարսրս օցան կը վախի, ջահիլ ա բրրդան մին պեն կինի»։

Տա տանրմ ա օցը քցրմ կրտերը, կյամ տոն, հարսին ասրմ. — Մին պեն ըմ պերալ, ամմա էքյուծ նշանց կրտամ։

Էրկունշի օրը հարսը պրցրանրմ ա կրտերը, տեսնրմ մին թրնգակին քար, վեր Զումրուտ ղուշը կրտուցան եր ա քրցալ, թողալ ըտեղ, օցը եր կալալ, տարալ։

Էտ հարսը էտ քարը յոր ա օնրմ, կյամ տոն։ Էքյսը թաքավերին ջանչին ջառ ա կանչրմ, ասրմ.— Ա՛ ժողովուրթ, տուս եկեք, տուս եկեք հա՜, տուս եկեք։

Թաքավերին հրամմանն ա, թաքուհին մին թրնգյակին քար ա կուրցրալ, հու վեր ճարալ ա, պերի տա։ Թաքավերը ճարողին իրեք քրսակ վրեսկե յա տալու։ Ա՛յ ժողովուրթ, լավ ըսկացեքյ, իրեք քրսակ վրեսկե՜։

Էտ վեր լրսրմ ըն, պատրոնը նան հարսը եր ըն կրենրմ, քյինրմ թաքավերին պալատը, էտ անկյին քարը տամ թաքավերին։

Թաքավերը ըտրանց իրեք քսակ վրեսկե յա տամ։ Ըտրանք յոր ըն օնրմ, կյամ տոն։

Էտ վրեսկավը ուրանց հետի լավ-լավ պալատնի յրն շինրմ, վեր էտ պալատներին շոքը ընդնրմ ա, էն հարուստին տոնը ծասկրմ։

Էտ հարուստ տրղին հարը ուրան տրղին ասրմ ա. — Վեր քյրեղ ըսեցի անկրտրելի ծրմերուկ ա՜՜, հետե մերը խակ, անհամ ա տուս եկալ, ուրանցը քախծրը, կյարմուր։

Թող ծրեր պենն էլ միշտ հաճող ինի՜, ա՛ հաքյաթ լրսողնի՜։